

ՀՈՒՆ ԱՅԳԻ ԵՎ ՊՐԵՍԻ ԶԼԵԱ, ԿՈՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՎ ՅՈՒՆԱՄ
Տруды виноградно-винодельческой зон. станции ССРА
Annales de la station oenologique d'Arménie (SSRA)

Հայաստանական պետական գրադարան

Գումար 3

ԽԱՂԱԳԻ ԱՅԳԻ ԵՎԻ
ՄՃԱԿՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Կազմեց
Մ. Մ. Ա. Խ. Ա. Յ. Ա. Յ.

ԵՎԵԼԻՈՏԵԿԱ
ԽՈՏԻԿԱ
ԲՈՅՈՒԹՅՈՒՆ
Ակադեմիա Նաւու
ՀՍՀ

634

Մ-15

1935

ՅԵՐԱՎԱՆ

35-1
JAN 23 1973

74 AUG 2010

ՀԱՅՀ ԱՅգեգիւնեգործական ԶԱՆԱ ԿՈՅՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Труды виноградно-винодельческой зоны станции ССРА
Annales de la station oenologique d' Arménie (SSRA)

Գիտ-մասնային սերն

Digitized by Google

ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ

ՄԱԿԱՐԵՑՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՄՐԿՈՒՄՆԵՐ

Կազմեց Մ. ՄԱԼԻԱՍՅԱՆ



32-174598

21 JUN 2013

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կենսագործելով Համ. Կ(բ)Կ. ԿԿ-ի 1931 թ. հոկտ. 31-ի պատմական վարչությունները, ներկայումս մենք ունենք խոցոր նվաճումներ Խորհրդային Հայաստանի այգեգործության բնագավառում:

Այս տեսակետից հատկանշական եւ այն, վոր 1932 թ. վերջում մենք ունելինք 11686,9 հեկտար այգի, 1934 թ. վերջում՝ 12538,3 հեկտար, իսկ 1937 թ. նախատեսվում ե այդիների տարածությունը հասցնել 17,000 հեկտարի նույնպիսի նվաճումների ցուցանիշներ ունենք և բերքատվության բարձրացման ասպարիգում: 1932—1933 թ. թ. մի հեկտարի միջին բերքը կազմում եր 34,2 ցենտներ, 1934 թ. (նախնական տվյալներով, Արարատյան դաշտի այգիների բերքի հաշվով)՝ 60 ցենտներ, իսկ 1937 թ. նախատեսվում ե հասցնել 70 ցենտների:

Հրատարակելով Հողժողկոմատի և Հայաստանի այգեգինեգործական զոնալ կայանի կողմից հավանություն դատած «Խաղողի այգիների մշակության ագրոտեխնիկական ձեռնարկումներ» ը, նպատակ ունենք, թեկուղ ամենատափոք չափով, նպաստելու այգեգործության ֆրոնտում աշխատողների զիտելիքների զարգացմանը:

ԳՅՈՒՂՋՐԱՏ



60234-67

ԱՅԴԻՆԵՐԻ ՊԱՐԱՏԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԶՈՒԳԸՆԹԱՑ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Խաղողի վազը, վորպես բաղմանյա բույս, տանյակ առարիների ընթացքում սնունդ վերցնելով իրեն արամառված հողից, հետզհետեւ պակասեցնում եւ մարսելի սննդանյութերի քանակը հողում: Բերքատվության բարձրացման տեսակետից, ագրոտեխնիկական մյուս աշխատանքների շարքում, հետեարար, առաջնակարգ տեղերից մեկն եւ գրափում այգու պարարտացումը:

Խորհրդային Միության մեջ, այդ թվում և Խորհրդային Հայաստանում, քիմիական արդյունաբերության զարգացման հետեամբով, մոտիկ ապագայում հարավոր կլինի ստանալ հանքային պարարտանյութեր նաև այգեգործության մեջ ոգտագործելու համար: Յերկրորդ հնգամյա պլանի համաձայն Հայաստանի այգիներում 1936 թվից գործադրվելու յեն 892,1 տոնն հանքային զանազան պարարտանյութեր (կալցի ցիանամիդ և սուաղերֆուֆատ): Սակայն այգիների պարարտացման համար, հենց այս ապրավանից, ինչպես և հետագայում, պետք եւ ոգտագործել տեղերում յեղած մի շարք պարարտանյութեր (գոմաղը, մոխիր, խառնաղը):

Այն զբշտներում կամ գյուղերում, ուր հարավոր եւ գոմաղը վերցնել այգիների համար, պետք եւ աղըն այգի փոխադրել մարտի սկզբից մինչ այգերացի սկսվելը. թարմ գոմաղը լավ եւ փոխադրել աշնանից և թողնել կույտերով մինչև գարունը: Առաջին հերթին պետք եւ պարարտացնել այն

այդիները, վորոնց քարքարուտ, ավազային հողն ավելի յէ աղբատացել, նվազել վազերի աճումը և ակնհայտորեն ընկել է բերքատվությունը:

Թարմ խոտի մնացորդներով շաղախմած գոմաղբը լավ է տալ ծանր կավային հող ունեցող այզիներին, վորովինետե, գոմաղբը, բացի լիարժեք պարարտանյութ լինելուց, լավացնում է նաև հողի կառուցվածքը: Հողին գոմաղբը թարմ վիճակում տալու գեղքում, իհարկե, նրա դրական ազդեցությունը կերևա ավելի ուշ (1—2 տարուց հետո): Մեկ հեկտար այդուն արվում է 350—400 ցենտներ (80—100 սոյլ), վորը կբավարարի յերեք տարի:

Այդեփորի ժամանակ պետք է դոմադրը փոել այդում և փորելով խառնել հողի հետ (հողի տակն անել):

Ճիշտ է, խառնաղբը (կոմպոստ), առավել եւ մոխիրը, նույն արժեքը չունեն ինչ գոմաղբը, անկային, վազերին վորոշ մնադանյութեր տալու տեսակետից, լավ է այզին պարարտացնել նաև այս նյութերով, վորովինետե դյուղերում դրանցից կարելի յէ ավելի շատ և հեշտ կերպով գտնել:

Մոխիրը պետք է տալ վոչ կավային ծանր հողերին, խսկ այլ տեսակ հողերին տալ հեկտարին 4—5 սոյլ:

Մոխիրը պետք է համասարապես շաղ տալ այդում և այս գեղքում անհրաժեշտ չե մնապայման հողի տակն անելը, վորովինետե նա ցնդող նյութեր չունի և հեշտությամբ լուծվելով, ծծվում է հողի խորքը:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե վորքան աշխարհամ բանվոր ե հարկավոր մեկ հեկտարին այս կամ այն ձեմով պարարտացնելու համար, ինչպես և այդեղործական մյուս բոլոր աշխատանքների գեղքում, պետք է զեկավարվել տեղերում գոյություն ունեցող, ճշտված արտադրանքի նորմաներով:

Անհրաժեշտ ենք համարում նշել, վոր պարարտացման աշխատանքներից ել առաջ և նրան զուգընթաց պետք է կատարվեն նաև այդու առուների մաքրումներ:

ԱՅԳԵԲԱՑ

Այգերացը գարնանը կատարվող այգեգործական այն աշխատանքն է, վորի սկիզբն ամբողջապես կախում ունի ողբերեութաբանական պայմաններից: Այս պատճառով առանց ուշացման այգերացին պետք է դիմել այն ժամանակ, յերբ յեղանակների տաքանալու հետևանքով ձյունը հալվել է, չկա ցրտահարման իրական վտանգ և այզին մտնել հնարավոր է (յերբ հողը ամբողջովին ցեխ չե): Սա լինում է մոտավորապես մարտի 15-ին: Նայած տարգան՝ այգեբացն սկսել մի վորը շուտ կամ ուշ, սակայն այս աշխատանքի տեսողությունը չպետք է անցնի տասնեհինգ որից:

Այգերացի ընթացքում բերքատվությանը հենց սկզբից չփասելու համար պահանջվում է աշխատանքները կատարել զգուշորեն, խնամքով: Քիչ չեն այն դեպքերը, յերբ առանձին կոլտնտեսություններում ու խորհունտեսություններում այգերացն անվորակ կատարելու պատճառով կոտրըգում են բազմաթիվ վազերի առանձին թեփերը, բերքատու մատերը, կամ պոկվում, ֆնասվում են պետքական աչքերը: Այսուհետեւ, անհրաժեշտ է հենց այգերացի ընթացքում վազերի վրայից յետ տրվող հողը փոել շարքամիջերը, վորովինետե այլապես աստիճանաբար ավելի կմեծանան, կրաքարանան առանց այդ ել մեծ թմբեր՝ մեր հին սիստեմի այգիներում: Հողը չհարթելիս նոր սիստեմի այզիներում (լարային) կազող են հետզհետե թմբեր գոյանար, վորը թույլատրելի չե:

ՎԱԶԵՐԻ ԵՏԵԼԸ (ԿՏՐԵԼԸ) ՅԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ետելը նպատակ ունի ըստ տարիների քանակագեսու վորակապես աղամանավորել, կանոնավորել խաղողի բերքատվությունը, Ցենելով թե տնտեսական, և թե տվյալ

սորակի ու տեղի հողային կլիմայական պայմաններից, պահանջվում է առանձին մոտեցում ունենալ վազերի նկատմամբ:

Այսպիսով, յեթե այդու մշակությունը հենքում է աշխատանքների մեխանիզմացիայի վրա (փորը լինելու յենոր սիստեմի այգիներում), ապա, նախ և առաջ, ետք պիտի կատարվի գորոշ սիստեմով, վազին պիտի տալ փորոշակի ձև, փորավիսին ներկայումս հանդիսանում է հովհարի ձեվը:

Այսուհետեւ թե նոր, և թե հին, թմբային սիստեմի այգիներին ետելիս (յերբ թփերը չեն ձևավորվում փորոշակի սիստեմով) զեկավարվում ենք մի քանի հիմնական սկզբունքներով: Այսպես, որինակ, այն դեպքերում, յերբ պայմաններն ախտես լավ են, փոր բերքատու վազն աճում է ուժեղ, փարթամ ձևով, ապա վազին արվում է համեմատաբար ավելի մեծ ծանրաբեռնում, փորակողի թփեզը չհոռանան և չընկնի բերքատվությունը:

Այս սկզբունքը պետք է իրագործել առահճանաբար, ավելացնելով գլխավորապես թփի վրա թերերի քանակը: Մինչդեռ շատ տեղերում այս խնդիրը լուծում են վոչ ճիշտ ձևով, ավելացնելով միայն մատերի թիվը, կամ թե մատերը շատ յերկար են ետում և մատերի վրա շատ աշքեր են թողնում: Դրա հիմնանքը լինում է այն, փոր լավ դրության մեջ չեն լինում բերքատու մատերը, յերկար ետված մատերի մոտ նկատվում է առավելապես վերեի աշքերի բացումը, իսկ այս բոլորը բացասաբար են ազդում վազերի բերքատվության վրա:

Այն գեղքերում, յերբ վազի պայմաններն այնպես են, փորնրա աճումը թույլ է, ապա չպետք ենրան ծանրաբեռնել, չպետք է ուժից զցել: Այսպիսի գեղքերում անհրաժեշտ է վազերը կարճ ետել:

Չնայելով այս սկզբունքները լավ հայտնի յեն նաև մեր շատ այգեգործներին, սակայն փորոշ տեղերում մե-

նամնատեսների մոտ (անցյալ և հատկապես նախանցյալ տարի Աշտարակի շրջանի մի քանի գյուղերում) նկատվում եր վազին նրա կարողությունից ավելի բեռնելու, յերկար ետելու դեպքեր:

Ճիշտ ե, Արարատյան գաշտի վուսպվող այգեգործության պայմաններում մենք չենք կատարում այգեգործության մեջ սովորաբար հասկացված կարճ ետ՝ 2—3 աչքի վրա, այլ կատարում ենք ընդհանրապես չորս և ավելի աշքերի վրա, փորը կոչվում է յերկար ետ, բայց այդ չեն շահանակում, փոր մենք կարող ենք աշքերի թիվը քմահաճ ձևով շատացնել՝ չափից ավելի յերկար կարելով մատերը:

Այսուհետեւ, ետ կատարելու ընթացքում, անպայմանորեն, պետք է հաշվի առնել նույնակես ամեն մի փոփոխակի (սորտի) առանձնահատեկությունները: Կան փոփոխակներ, փորնք միևնույն պայմաններում հանդես են ընթարում ավելի նվազ, թույլ աճեցողություն, քան մի ուրիշ փոփոխակի: Որինակ, Ղամարլի կախեթն ավելի թույլ է աճում, քան նույն պայմաններում աճող մսխալին: Այս դեպքում թույլ աճող վազերն ետվում են համեմատաբար ավելի կարճ, ընդհանուր առամամբ չորս աշքի վրա:

Բացի այդ, կան փոփոխակներ, փորնց մատերի վրա բերքատու աշքերը դասավորված են ավելի բարձր, որ մսխալին, քան մի ուրիշ փոփոխակի մոտ, որ կախեթին:

Պարզ է, փոր առաջին դեպքում, յեթե ապահովված են վազերի աճումը, կարճ ետ կատարելով մենք անտեղի կերպով կարած կիբունք բերքատու տչքերի մեծ մասը — թռղնելով ամենացածի վոչ բերքատու աշքերը: Հասկանալի յե, փոր դրանով մենք սխալմամբ պակասեցրած կիբունք բերքատվությունը:

Այսպիսի ուրեմն, ետ անելիս միաժամանակ պետք է հաշվի առնել վերը նշված բոլոր հանգամանքները և ըստ այնմ մոտենալ ամեն մի վազին: Ասածներից արդեն պարզ

ե, թե վորքան լուրջ և պատասխանատու յե այս գործը: Աւստի ետի աշխատանքները թույլատրվում ե հանձնարարել միայն ետից հասկացող, փորձված մարդկանց, փորոնց ուժեղ կերպով պետք ե հսկեն բրիգադիները և ապահովված ինի ազրովերսոնալի ընդհանուր դեկավարությունը:

Ի դեպ, միանգամայն անհրաժեշտ ե սովորեցնելուց, վարժեցնելուց հետո աստիճանաբար ետի աշխատանքներում ներգրավել նաև կանանց: Դա անհրաժեշտ է հատկապես այն շրջաններում, վորտեղ գարնանը բանուժի խընդիրն ավելի սուր ե դրվում:

Այնուհետև, անհրաժեշտ ե ետք կատարել վորակով, մաքուր հեռացնելով չորացած մասերը կամ հիվանդացած մատերը, ինչպես և ընամատերը, կարկտահարված և այլ վոչ թերքատու մատերը (յեթե այդպիսիք վազի աճումն ու ձևավորումն ապահովելու համար պետքական չեն): Մատերը լավ ե կտրել հանգույցից 1—2 սմ. բարձր և թեք՝ աշքին հակառակ, վորպիսդի լացի և անձրենի ջրերն աչքի վրայով չհոսեն ու չփչացնեն այն: Պետք ե խուսափել վազին շատ վերքեր հասցնելուց, վորի համար հարկավոր և ունենալ ետի սուր գործիքներ (սեկատոր, սղոց):

Ետի աշխատանքներն սկսվում են այգերացն սկսվելուց մի քանի որ հետո (մոտավորապես մարտի 18—20-ից), այն հաշվով, վոր ավարտվի վոչ ուշ 20 որից: Ետի ժամանակ թողնել հարմար, յերկար լավ մատեր՝ հետագայում անգալիս կատարելու համար: Այդ նույն ժամանակում, ավրորացիքի յենթարկված (յառլիկավորված) վազերից վերցնել և խրձերով (200-ական հատ) ըստ սորտերի առանձնացնել կտրոնները (տնկելու համար՝ մատեր): Յեթե վերցված կտրոններն ոգտագործվելու յեն ամենառոշը 5—7 որ հետո, ապա կարելի յե պահել ջրում մինչև տնկելը: Իսկ յեթե մեալու յեն շաբաթներով, յերկար ժամանակով, ապա վո-

րել խրամատներ (վոսեր) և դրանց մեջ թաղել՝ ծածկելով 10—15 սմ. հաստության հողաշերտով:

Ետելու ընթացքում, մինչ 15—20 ապրիլի, կատարեն նորատունկ այգիների գարնանային լրացումներ (իսկ աշնանային լրացումները կատարել հոկտ. 20-ից նոյեմբերի 10-ը): Թե գարնանային և թե աշնանային լրացումները կատարվում են բացառապես լավորակ արմատակալած կտրոններով («յերինջներով») և անմիջապես ջրվում: Վերջապես, ետելուն զուգընթաց պետք ե հավաքել և դուրս բերել արքադը, այգեփորի և հետագա այլ աշխատանքներին շխանդարելու համար:

ԱՅԳԻՆԵՐ ՓՈՐԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գարնանային այգեփորը կամ նոր սխատեմի այգիների վարը պետք ե կատարել սվյալ այգին ետելուց և արքադը հավաքելուց անմիջապես հետո, յերբ, ինչպես ասում են, հողը «քեշի» յե յեկել:

Այգեփորը հիմնականում պետք ե ավարտել մինչև վազի բողբոջների բացվելը, վթթելը, վորից հետո վորոշ ժամանակով այգում աշխատանքներ կատարել անթույլատրելի յե: Այդ ժամանակ աշխատանքներ կատարելը չափազանց գտանգավոր ե, վորովհետև ամենափոքր շփումից անդամ, հեշտությամբ բողբոջները պոկվում, թափվում են, պատճառելով բերքի զգալի կորուստ:

Այսպիսով այգեփորի աշխատանքներն սկսվում են մոտավորապես մարտի 20—22-ից և հիմնականում ավարտվում ապրիլի 20—22-ին. հենց այս ժամանակամիջոցումն ել ետից թողնված յերկար մատերի միջոցով կատարվելու յե անգալիսը, լրացնելու համար բերքատու այգու բաց տեղերը կամ փոխարինելու անբերրի վագերը:

Նոր սխատեմի (լարային) այդիներում այս ժամանակամիջոցում զուգընթացաբար կատարել նույնպես այսունե-

քի ամրացման, լարեր ձգելու և վազերն առաջին լարից կապելու («չոր կապ») աշխատանքները:

Այսկեփորը կամ լարային այզիների խոր վարը պետք է կատարել ամեն տարի և համատարած կերպով (թե թմբերը, և թե թմբամիջերը). Լարային այզիները վարելուց հետո մնացած վազամիջյան տարածությունները նույնպես պետք է փորվեն:

Այս ձևով պետք է ամեն տարի խոր կերպով վարվեն կամ փորվեն բոլոր այզիները 100° -ով. Փորելու կամ վարի խորությունը, նայած պայմաններին, վերցնել 18—22 սմ.-ից վոչ պակաս՝ թմբերի մեջ, իսկ թմբերը փորելու խորությունը՝ 25 սմ.-ից վոչ պակաս:

Փորելու ընթացքում անհրաժեշտ է հեռացնել վազի մակերեսային արժատները («մորուսները», «սալիկայները»), փորով մնացած հիմնական արժատներն ավելի խոր կդնան, վերցնելով ավելի շատ խոնավություն և մնունք:

Անհրաժեշտ է նաև լավ «քոթուկ» անել, մաքրել փուած, չորացած մասերը, հավաքել չայբերը, տակոփկները և գուրս տանելով թմբերից, առանձին տեղում ալրել (յեթե չի գործածվելու տնտեսության կարիքների, սիլոսի և այլ կարիքների համար): Այլելու գեպջում լավ և մոխիրը շաղ առաջընկած այլում: Առապարային («զըռ») հողերում փորելու ժամանակ դուրս յեկած մեծ, խոշոր քարերը պետք է հավաքել և դուրս բերել թմբերից:

Այսկեփորի աշխատանքները պետք է կտարել զգուշորեն և ջարդվածքներ չառաջացնել:

Նշված ձևով ամեն տարի կատարելով այսկեփոր՝

ա) մենք հողը պահում ենք փուխը վիճակում, զորի չնորհիվ նրա մեջ շատ խոնավություն և ծծվում և յեղածն արագորեն չի գոլորշիանում.

բ) այդպիսի փուխը, ծավալուն հողի մեջ ոդը շատ

լինում, հետեաբար և շատ թթվածին, զորն անհրաժեշտ է արմատների շնչառության համար.

գ) յերբ հողում ոդը շատ է, ոգտակար փորոշ մանր եյակներ (բակտերիաներ) կարողանում են վազի համար մարսնի (ազուային) մննդան խոթեր պատրաստել, քայլքայելով որդանական նյութերը, զորն անհրաժեշտ և վազի կանոնավոր աճման և լավ պատրերման համար.

դ) այզին գարնանը փորելու կամ խորը վարելու շնորհիվ, ինչպես ասինք, վոչնչանում են վազի մակերեսային արժատները, փորով հսարափորություն և արվում մնացածներին ավելի խորը զնալ: Սրա հետեանքով վազը համեմատաբար չորության ավելի դիմացկուն և դառնում:

ե) այզին փորելու կամ խորը վարելու ժամանակ վոչնչանում են մոլախոտերից շատերը, փորոնք հողից վերցնելով աննդանյութերը, պակասեցնում են խաղողի թփի տրամադրության տակ լինելիք խոնավությունն ու մնունդը: Բացի այդ, մոլախոտերից այսպիսիները, փորոնք ուժեղ աճեցողություն ունեն, չհեռացվելու դեպքում բարձրանում ու սալիքը են զցում վազի տերեների և պտուզների վրա.

զ) վերջապես, փորելու հետեանքով, մասամբ վոչնչանում են նաև զիթափորապես վազի բնի վրա բնակված զանազան կապատճերը կամ նրանց ձերբ:

ՎԱԶԻ ԿԱՆԱԳ ՀԱՏՈՒՄՆԵՐ

Խաղողի այզիներում ամրանը կատարվող աշխատանքներից մեկն և համարված կամաչ հատումների կամ «սուղը» տալու, «գրող» անելու գործողությունը: Սա հիմնականում կայանում է վազի բնի վրա դուրս յեկած շվերի, բճաշվերի հեռացման, ինչպես և պտղատու շվերի ծերատման ու այլ ոպերացիաների մեջ:

Կամաչ հատումները՝ փաստորեն մինելավ ետի աշխատանքների լրացումն ու շարունակությունը, այդպիորդի-

ձեռքին մի միջոց են հանդիսանում նաև վերտցնելու ետի ժամանակ յեղած թերությունները (վոչ բերքատու մատերի, շպերի, չորուեների, «յեղունգների» սեկատորով կամ սուր դանակով հեռացնելը, կտրելը ևայլն):

Կանաչ հատումների ճիշտ կատարումից եւ կախված նաև իրադողի վազին հետագա տարիներում ճիշտ ձևափորում տալու գործը:

Վերջապես, կանաչ հատումների ընթացքում հեռացնելով անբերրի և վազի պատրաստի մննդանյութերի հաշվին պարագիտորեն զարգացող շվերը, վորոնք ստվերավորում են նաև տերևների ու վողկույզների մի մասին, դրանով, ահա, ապահովում ենք քանակով ու վորակով ավելի բարձր բերքի ստացումը:

Այստեղից ինքնըստինքյան հասկանալի յեւ, վոր այս աշխատանքն ետելու նման կարեսը և լուրջ աշխատանք եւ, ուստի «սուլդը» տալու գործը նույնպես պետք եւ հանձնարարել փարձված մարդկանց, իսկ ամենից լավ եւ հանձնարարել հենց նույն այդ ետվորներին:

Կանաչ հատումների ժամանակ հեռացնել հողի մոտից դուրս յեկած շվերը: Այնուհետև, անհրաժեշտ եւ հեռացնել վազի բնի կամ թեփերի վրա զուրս յեկած անպետք շվերը: Ստկայն այն վազերի նկատմամբ, վորոնց մոտ թեփերը շատ են յերկարել, պետք եւ թողնել այս շվերից՝ բունը կամ թեփերը ցածրացնելու, կարճացնելու համար:

Հաճախ պտղապատ տարեկան մատերի աշքերից դուրս են գալիս զույգ շվեր. նման գեպքերում ընդհանրապես գրանցից մեկը պետք եւ հեռացնել: Պետք եւ հեռացնել կողքի ավելի թույլ աճած շիվը, վորը քիչ գեպքերումն եւ բերք տալիս: Յեթե յերկու շվերն ել զրեթե հավասար աճեցողություն ունեն, ապա հարկավոր եւ թողնել այն շիվը, վորի վրա ավելի մեծ բերք կա (յերբ յերկուսն ել

ունեն հավասար բերք ու վազն ել ուժեղ ե, պետք եթողնել յերկումն ել):

Առաջին «սուլդը», կամ կանաչ հատումները կատարել վազի ծաղկումից առաջ մայիսի 15-ից մինչև 25-ը, վորովնետև ծաղկման ժամանակ և մանավանդ նցանից հետո յեւ, վոր պահանջվում եւ մննդանյութերի մեծ քանակությունների թե արագորեն աճող կանաչ մասերի, և թե առաջցողով պաղի կազմակերպման ու զարգացման վրա: Ուրեմն յեթե «սուլդը» տալու միջոցով չհեռացնենք վազի այդ ավելորդ մասերը, նրանք պարագիտի նման իդուր պիտի մննդանյութեր ծախսեն, այդպիսով պակասեցնելով պտուղներին և վազի մյուս ոլետքական մասերին հասնող մննդանյութերի բաժինը: Յերկրորդ «սուլդն» անհրաժեշտ եւ տալ հունիսի 20-ից մինչև հուլիսի 10-ը: Այս ժամանակ լրացվում են առաջին «սոլից» մնացած աշխատանքները, հաւակապես հեռացվում են այսպես կոչված բճաշվերը (տերեների ծոցից դուրս յեկած կողմանակի շվերը): Բճաշվերը պետք եւ հեռացնել վոչ թե ամբողջապես հիմքից, այլ կտրել հիմքից 1—2 տերե բարձր (քնած բողբոջներին չփառելու համար): Ի դեպ, պետք եւ ասել, վոր այս կտմայն այդում, այս կամ այն փոփոխակի նկատմամբ մի քանի տարի շարունակ մեծ քանակությամբ բճաշվերի յերեան դալը և մատերի հուացումն ապացույց եւ այն բանի, վոր տվյալ վայրում այդ փոփոխակի վազերի մշակությունը, ընդհանուր առմամբ, ճիշտ չի տարվում: Այսպիսի յերեսույթ, մինչև 1934 թիվը, նկատվում եր առաջին խորհություններունում խարջի փոփոխակի նկատմամբ: Ինչպես պարզվեց հետագայում, զբա պատճառն այն եր, վոր վազերին տրվում եր ավելի քիչ բեռնավորում, քան պետք եր և ջրվում եր պետք յեղածից ավելին:

Այնուհետև հուլիսի 25-ից մինչև ոգոստոսի 5-ը կարելի յեւ կատարել շվերի աճող ծայրերը կտրելու, ծերտա-

ման աշխատանքները, վերջինս հանձնաբարվում է կատարել միայն «լարային» այդիներում, այն ել այն գեպքում, յերբ վագերը չափից ավելի ուժեղ են աճում:

ՔԱՂԱԿԱՆԻ, ՓԽՐԵՑՄԱՆ ՅԵՎ ԱՅԼ ԶՈՒԳԸՆԹԱՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ինչպես ցույց տվին Այգեգործական Պայանի կողմից 1933 և 1934 թվերին կատարված հետազոտությունները, շատ տեղերում մեր այդիներն ավելի շատ խոտանոցի յեն նմանվում (որինակ՝ Համարլիք, Ալլահվերդու, Իջևանի և Շամշադինի շրջանների մի-քանի գյուղերում): Վերոշ գեպքերում հենց այդպես ել նայում են այգու վրա՝ իրեն խոռ վերցնելու աղբյուրի, փոխանակ կուտ. խորհրդային վերադաս որդանների վորոշումների հիման վրա—ստեղծելու անասունի կերի հիմնական, ինքնուրույն բազա, փոխանակ ընդարձակելու և լավացնելու խոտակերաբույսերի ցանքերը:

Ինչ խոսք, վոր նման զեպքերում մեկ կողմից հարգած ե հասցվում անամնավահության հետագա զարգացմանը և մյուս կողմից խախտվում է Համկոմկուսի (ը) կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի և ՍԽՀՄ Ժողկոմխորհի 1934 թվի վորոշումները՝ Անդրկովկասում հատուկ կուրտուրաներ (այդ թվում և մասնավորապես այգեգործությունն ու պաղարուծությունը) զարգացնելու մասին:

Այդիներն անպայմանորեն պետք է մաքուր պահել ամեն տեսակ մոլախոտերից, վորի համար և անհրաժեշտ կատարել ե քաղիան, փարեցում՝ թմբային այդիներում վոչ պակաս 2 անգամից, իսկ լարային սիստեմի այդիներում անցկացնել մեքենայական կամ ծփաքարը կուլտիվացիա 3 անգամից վոչ պակաս, հետևյալ սոտավոր ժամկետներում առաջին մեքենայական կուլտիվացիան մայիսի 10-ից 25-ը: Առաջին քաղիան կամ նոր այդիների յերկրորդ կուլտիվացիան՝ հունիսի 15-ից հուլիսի 5-ը: Յերկրորդ փարեցում՝ քաղիան

կամ լարային այդիների յերրորդ կուլտիվացիան՝ հուլիսի 15-ից ոգոստոսի 5-ը:

Նորատունի այդիները քաղիանել-փխրեցնել առնվազն 4 անգամ:

Քաղիանի-փխրեցման աշխատանքներն անպայմանորեն պետք ե գալարեցնել ծաղկման շրջանում (մայիսի 25-ից հունիսի 15-ը): Այնուհետև անհրաժեշտ և խստորեն հետեւ գայլուկի, «գաղձի» յերևալուն—թե այդու առուների յեզերաներին, և թե այդու մեջ գայլուկ նկատվելուն պես հավաքել անմիջապես առանձին տեղում և այրել:

Նոր սիստեմի այդիներում, առաջին կուլտիվացիային զուգընթաց, պետք ե տանել շվերն յերկրորդ լարից կապելու (առաջին «կանաչ կապ») աշխատանքները, ժամկետ մայիսի 15-ից մինչև 25-ը: Յերկրորդ լարից կապելու աշխատանքները պետք ե կատարել հունիսի 25-ից մինչև հուլիսի 10-ը: Հատկապես առաջին «կանաչ կապ» ժամկետի պետք ե աշխատել զուգուրեն՝ կանաչ շվերի շարդպելուն ուղղիք ըրտալու համար:

Թմբային սիստեմի այդիներում նեցուկ տալու («խշմաքելու») աշխատանքները կատարել հունիսի 20-ից մինչև հուլիսի 5-ը, անպայմանորեն յերկրորդ անգամ կատարելով լրացում, ժամկետ՝ հուլիսի 25-ից մինչև ոգոստոսի 10-ը:

Թե վորքան անհրաժեշտ ե այդիների քաղիանի-փխրեցման աշխատանքների կատարումը և դրական նշանակությունը մոլախոտերի զեմք կութելու, խոնավություն խնայելու, հողի մեջ ողիք քանակին ավելացնելու և այլ ուսուիկաներից, այնքան պարզ ե, վոր հարկ չենք համարում դրա վրա սուանձնապես կանգ առնել:

ԱՅԴԻՆԵՐԻ ՎՈՐՈԴՈՒՄԸ

Հայաստանի ջրավի այգենործության պայմաններում ամենակարևոր խնդիրներից մեկն ե վոռովման հարցը: Վոռովման հարցը կարևոր ու հրատապ ե վոչ միայն այն պատ-



ձառով, վոր մեր հիմնական այգեգործական շրջաններում վազի մշտկությունն առանց ջրելու տանել հնարավոր չե, այլ և այն պատճառով, վոր հենց այդ շրջանների մեծ մասում յեղած ամենաարժեքավոր կուլտուրալի՝ բամբակի զարդացումը պահանջում է լուրջ և ուշադիր վերաբերվել այս հարցին։ Մինչդեռ շատ աեղերում նկատվում են յեղած ջրի վոչ ախնքան ճիշտ ու խնայողաբար ծախսման բազմաթիվ փաստեր։

Անհրաժեշտ ե ձեռք առնել կտրուկ միջոցներ պայքարելու հոգուտ ջրի կանոնավոր, առանց կորուստի ողտագործմանը։ Այդիները կանոնավոր ջրելու դեպքում հին, բերքատու այգիներին պետք ե տալ 4—5 ջուր (հաշված նույն թաղելու նպատակով արվող ջուրը): Վոռովման իրրե որբենատիր ժամկետներ կարելի յե նշել՝ առաջին անգամ ապրիլի 25-ից մինչև մայիսի 15-ը, այլ կերպ ասած մինչև ծաղկելը։ Յերկրորդ անգամ պառուղ կաղմելու՝ «զոռայի» շրջանում—հունիսի 20-ից մինչև հուլիսի 5-ը, Յերրորդ ջուրը տալ խաղողալիցի ժամանակ, հուլիսի 25-ից մինչև ոգոստոսի 5-ը։ Չորրորդ անգամ բերքը հասունանալուց առաջ, ոգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 15-ը և վերջապես հինգերորդ ջուրը տալ այգեթաղից առաջ, հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 12-ը^{*)}։

Յերիտասարդ, 1—2 տարեկան այգիները ջրել ըստ պահանջի (8—12 անգամ)։ Իր ժամանակին, վորակով փորդած՝ այգիներն արգելվում ե ջրել այգենորից մեկ ամիս անցնելուց շուտ (բացառությամբ վորոշ դեպքերի)։ Արգելվում ե նույնապես այգին ջրել ծաղկելուց ամենաքիչը 10 որ առաջ, ինչպես և բերքահավաքից 15—20 որ առաջ։

¹⁾ Այն բացառիկ դեսքերում, յերբ այգու հողի ստորերկրյա ջուրը շատ մոտիկ է, կարելի յե բավարարվել 3 անգամ ջուր տալով։

ԱՅԴԻՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Զանազան վնասատու մնկերը, միջատներն ու այլ վնասակար կենդանիներն ամեն տարի մեր զյուղատնտեսությանը հսկայական վնաս են հասցնում։ Համամիութենական կենտրոնական 4-րդ նստաշրջանի տվյալներով ԽՍՀՄ-ի գյուղատնտեսությանը տարեկան մեկ և կես միլիարդ ռուբլու վնաս ե կրում այդ վնասատուներից։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այս վնասի մի զգալի մասը վերաբերում է այգեգործությանը։ Ահա թե ինչու անհրաժեշտ և ամեն տարի սիստեմատիկ պայքար մղել այդ վնասատուների դեմ—առավել ևս այգեգործության մեջ, վորովհետև այս պայքարի ազգությունուր մի շարք միջոցների կիրառումը, համեմատած դաշտավարության հետ, սահմանափակված և (որինակ՝ ցանքի տարբեր ձևերի կիրառման, ցանքաշրջանառության և այլ ինդիքներում)։

Հայաստանի այգեգործությանը (չհաշված Փիլոքսերացով վարակված հյուսիսային յերեք շրջանները) ամենից շատ վնաս են հասցնում միլիոն («չորս») և ուղիղում («սև») հիվանդությունները, վորոնց դեմ, իրրե հիմնական միջոց դեռևս մնում են պայքարի քիմիական ձևերը։

Միլիոնյի դեմ պայքարելու հիմնական միջոց ե մնում բորգոյան հեղուկը։ Սրակող այդ հեղուկը պետք ե լինի մեկ տոկոսանի, վորը միանդամայն բավարար ե վոչնչացնելու համար միլիոն տուաջ բերող փոքրիկ սովորական աշքին անտեսանելի այն մնկին, վորը ծուռմ ե խոնավ պայմաններում (յերե կա ջրի կաթիլ), վորպեսզի դարնանը կանաչ շվերի և տերեների վրա յեղած ջրի կաթիլում արդեն տաքացած որերին այդ սունկը ծիլ չտա ու հերձանցքներով, ծակոտիներով ներա չմտնի բույսի կանաչ մասերի մեջ ու վարակի այն (վորից հետո կատարված բուժումն արդեն չի կարող վոչնչացնել մնկին)։ անհրաժեշտ և այդ

Ժամանակ անպայման կատարել առաջին պրոֆիլակտիկ (նախազգուշական) բուժումը, սրսկումը՝ չսպասելով հիվանդության յերևան դալուն։ Այդ սրսկումն անհրաժեշտ է կատարել ծաղկումից առաջ (մայիսի 5-ից մինչև 15-ը): Յերկրորդ սրսկումը կատարել ծաղկելուց հետո (հունիսի 15-ից մինչև 25-ը), հենց վոր ողերևութաբանական նպաստավոր պայմաններ լինեն միլդիույի համար կամ յերևան հիվանդության առաջին նշանները։ Իսկ այդ նշանները հետեւալներն են՝ նոր վարակված տերեփ տակի յերեսին, գլխավորապես նրա յեղրերին մոտիկ մասերում, նկատվում են բաց-դեղնավուն, գրեթե սպիտակ գույնի անկյունավոր փոքր բծեց, վորոնք հետագայում մեծանալով և գորշ (դարչնագույն) գույն ստանալով, իվերջո փշացնում են տերեսին, թույլ չեն տալիս, վոր նա մննդանյութեր պատրաստելու և շնչառություն կատարելու իր ոգտակար գործը շարունակի։

Արարատյան դաշտի վորոշ այդիներում, ուր ամեն տարի ուժեղ վարակում է տեղի ունենում և հատկապես Հայաստանի հյուսիսային այգեգործական շրջաններում, հաճախ անհրաժեշտ է կատարել նաև յերրորդ բուժումը՝ ի միջի այլոց այստեղ անհրաժեշտ ենցել, վոր Խ. Հայաստանի հյուսիսային այդ շրջաններում (Ալլահվերդի, Շամշադին և Իջևան) յեղած 325 հեկտար այդիների կլիմաց ավելին, բացի միլդիույից, արգեն վարակված է ֆիլոքանայով և ներկայումս իր ամբողջ լրջությամբ ու կարենությամբ պետք է գրվի ֆիլոքանայի գեմ մղվող պայքարի հարցը։

Այս նպատակով ահա, հենց ընթացիկ տարվանից այդ շրջաններում կազմակերպվում են ամերիկյան վագերի մայուսակներ (10 հեկտար տարածությամբ)՝ հետագայում պատվաստ կատարելիս մատերիալ ունենալու համար։

Միլդիույի գեմ մղվող պայքարի վերաբերյալ անհրա-

ժեշտ ե առանձնապես նշել, վոր կատարվող սրսկման վրակից շատ բան է կախված։ Այդ պատճառով պետք է այսպես սրսկել, վոր բորդոյան հեղուկը շատ մանր կաթիլ-ներով, հավասար կերպով ընկնի վազի բոլոր կանաչ մասերի՝ շվերի, տերեւների և չհասունացած կանաչ պտուղների վրա։ Դրա համար հարկավոր է ունենալ նաև բավարար քանակությամբ նախապես լավ նորոգված սրսկիչ ապարատներ և լավորակ բորդոյան $10/0$ -անի հեղուկ, վորը պատրաստվում է հետեւյալ կերպ։ ամեն մի 100 լիտր ջրին պետք է վեց-ներ մեկ կիլոգրամ մաքուր պղնձարջասպ և կես կիլոգրամ չհանգած մաքուր կիր (մաքուր չինելու գեղագում կիրը վեց-ներ մինչև 1 կիլոգրամ)։

Կրի նշանակությունն այն է, վոր նախ նա չեղոքացնում և պղնձարջասպի տերեւներին վնասելու, այրելու բացանական ազդեցությունը և ապա կտչուն և դարձնում հեղուկը։ Կիրն առանձին տեղում հանգնելուց հետո լուծել, նոսրացնել 10 լիտր ջրում։ Ստացված կրակաթը քամել (անցկացնել մազով) մի մեծ ամանում (վորտեղ ստացվելու յե պատրաստի հեղուկը)։ Քամելուց հետո ջրով նոսրացնել, հացնելով մինչև 50 լիտրի. դրանից հետո, առանձին ամանում, կրկին 50 լիտր ջրում լուծված պղնձարջասպի լուծույթը (մեկ կիլոգրամ արջասպը լուծված 50 լիտր ջրի մեջ) պետք է դանդաղորեն լցնել կրածրի, կրի լուծույթի մեջ և անընդհատ խառնել ստացվող հեղուկը։

Այսպիսով ստացվում է 100 լիտր բորդոյան հեղուկ, վորը պետք է լինի յերկնագույն, բաց կապույտ գույնի։ Հեղուկը լավ է ստուգել լակմուսի թղթով, ըստ վորում կարմիր գույնի լակմուսը պետք է թեթև կերպով կապտի, խոկ կապույտ գույնի լակմուսը մնալու յե կապույտ։ Հեղուկն անհրաժեշտ է պատրաստել վայտե ամաններում (տակառներում)։ Պատրաստելու մանրամասնությունների մասին լավ կլինի հարցնել տեղի ազրուաշատողներին։

Ոիդիումն ևս առաջ եղալիս սնկից ու մեծ մշաս հասցը-նում այգեգործությանը: Այս հիվանդությունը յերկան և զալիս տերեների, կանաչ շվերի, պտուղների կամ ծաղկափթթությունների վրա: Սա հանդես է դալիս վաղի կանաչ մասերի վրա մոխրագույն սպիտակ փոշու նստվածքներով:

Ոիդիումի (Շսկա-ի) դեմ պայքարելու արմատական միջոցը դեռևս համարվում է ծծմբով փոշոտելը: Թեև այժմ հանձնարարվում է նաև «ուլտրածծումբ»-ը, սակայն դրա ոդտակարության աստիճանը մեր պայմաններում դեռևս պարզված չէ:

Ծծմբով պետք է փոշոտել առաջին հերթին վարակման նշաններ ցույց տվող այդիները (այս տեսակետից մեկ հեկտարին հանձնարարվում է 20—25 կիլոգրամ, իսկ «ուլտրածծումբը»՝ 40—50 կիլոգրամ): Առաջին փոշոտումը կատարել հունիսի 20-ից մինչև 30-ը, առանց ձգձգման, հենց վոր յերկան կդան հիվանդության ամենափոքր նշանները՝ Հայաստանի հյուսիսային շրջաններում փոշոտումը կարելի յե ավելի շուտ սկսել: Հետադա բուժումը կատարել ըստ անհրաժեշտության:

ԲԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԲԵՐՔԱՎԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Մեր վողջ կոլտնտեսականներին, խորհանտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին հայտնի յե մեր կուսակցության և կառավարության հայտնի վորոշումը՝ սոցիալիստական գործի անձեռնմխելիության և պաշտպանության վերաբերյալ:

Թե ինչ բացառիկ կարենը նշանակություն ունի մասնավորապես բերքի պահպանման ու բերքահավաքն առանց կորուստների կազմակերպելու գործը, այդ պարզորեն յերեւլում է հատկապես ԽՍՀՄ Ժողկոմիորին և Համկոմկուսիք (թ) Կենտկոմի 1932 թվի հուլիսի 5-ի հայտնի վորոշումներից: Ուստի, բացի բերքի հասունացման սկզբից մինչև

այգեկութի վերջը նշանակվող պաշտոնական պահակներից, մեր վողջ հասարակայնությունը բերքի պահպանության գործը պետք է իր ընդհանուր հսկողության տակ վերցնի, խստորեն պայքարելով գողությունների և հափշատկումների գեմ:

Բերքահավաքն առանց կորսարի կատարելու նախապայմաններից մեկը, դա բերքն իր ժամանակին հավաքելն ե: Ուստի բերքահավաքի ժամանակը ավյալ շրջանում, կոլտնտեսությունում կամ խորհանտեսությունում լով կլինի վորոշել ազրոպերսոնալի, ազրուավագի, կուտնավարչության ու բրիգադիրի մասնակցությամբ, նկատի ունենալով ավյալ վորոշսակի յուրահատկությունը, վաղահասությունը և խաղողն ինչ նպատակի համար գործադրելը (սեղանի, թե գեսերտի գինու, թարմ գործադրելու, թե խաղողաճյութի համար և այլն):

Արարատյան դաշտում բերքահավաքը նախատեսվում է սկսել մոտավորապես հոկտեմբերի 1—5-ը, այն հաշվով, վոր այդ աշխատանքն ավարտվի ամենաուշը հոկտեմբերի 25-ին:

Մինքնաժամ և լայնորեն ծավալել սոցմրցումն ու հարգածայնությունը՝ բերքահավաքը բարձր վորակական ցուցագիշներով, խնամքով կատարելու համար: Լավ այդեկութի նիշներով, կամ թիկը, ինչպիսին հաճախ համար կույցներ կամ թիկը, ինչպիսին հաճախ առեղջություններում կոլտնտեսություններում և խորհանտեսություններում: Վողիկույցներն անհրաժեշտ ե կարել սուր դանակով, ըռում: Վողիկույցներն անհրաժեշտ ե կարել սուր դանակով, ինամքով դարսել գույլերում և դուրս բերել թմբերից: Խնամքով դարսել գույլերում և դուրս բերել թմբերից: Հիվանդություն կամ կիսանեխված վողիկույցները պետք է տունացնել:

Խաղողն այսուց մթերման կայանը կամ կորոնտեսության ու խորհանտեսության գինետունը պետք է տեղադրվի առաջարար տակառներում (և վոչ թե քաղաքակներու կամ փոխների հարմար տակառներում) և կամ գույլերի հարմար տակառներում, յերբ ճանապարհին շիրան քամփում, թափփում արկղներով, յերբ ճանապարհին շիրան քամփում, թափփում

ե): Տակառները, ինչպես և գույլերն ու այլ անհրաժեշտ տարաները (ամանեղենները) պետք եւ նախապատրաստված մինչև մինչև բերքահավաքը:

Աազդողը պետք եւ ընդունվի առանց ձգձգման, շիրայի քաղցրությունը արեումետրով ճիշտ վարչելով ու կշռելով:

Հարկավոր եւ մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնել, խնամքով հավաքել ու արկղներում դարսել բերքի այն մասը, վորս ուղարկվելու յեւ Միության բանվորական հեռու վայրեր՝ թարմ գործածության համար:

Բերքահավաքին զուղընթաց (մինչև հոկտեմբերի 25-ը) հավաքել և կապած խրձերով թմբերից զուրս բերել նեցուկները («խչմաբները»):

Կտրականապես արգելել բերքահավաքից հետո այդիներում անառուներ արածեցնելը:

ԱՅԴԵԹԱՂԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի այդեղործական հիմնական շրջաններում, ուր չնորհիվ կոնտինենտալ (ցամաքային) խիստ կլիմայի ընդհանրապես ամառվա 45—55 աստիճանի շոգերին հաջորդում եւ դաժան ձմռոց՝ հաճախ 25—30 աստիճանի հանող սառնամանիքներով, ահա խաղողի վաղերին ուշ աշնան, վաղ գարնան և գլխավորապես ձմրան ցրտերից պաշտպանելու համար, առայժմ, իբրև միակ հիմնական միջոց մնում է այդեթաղը:

Բացի մի քանի շրջաններից (Դալարազյաղ, Մեղրի, Գորիս, Ալահվերդի, Խջեմ, Շամշադին—ուր այդիները չեն թաղում), մնացած վայրերում անհրաժեշտ եւ խաղողի վազերն անպայման ամեն տարի ծածկել հողի բավական հաստ շերտով:

Թե վարքան անհրաժեշտ եւ թաղել այդիները, բավական եւ վերհիշել 1924/25 և 1931 թվականները, յերբ բաց մնացած վորոշ այդիներում ցրտահարվել եյին վոչ միայն

վազերի բերքատու առանձին մատերն ու բողբոջները, այլ և ամրող վերերկրյա մասերը: Այդպիսի դեպքերում շատ հատկանշական եւ կատարել և զննել խաղողի մի քանի թրփերի ցրտահարված մասերը, վորոնք յերեսում են սևացած (մեռած և այլակերպված բջիջների) տեսքով:

Պարզ ե, վոր նման դրությամբ այդին վոչ միայն հաջորդ տարին չի կարողանում բերք տալ, այլ հաճախ զրբկվում ենք բերքից 2—3 տարով (ուժեղ ցրտահարման ժամանակ, յերբ ստիլված ենք լինում կունդ անել): Ուստի ամեն տարի կատարելով այդեթաղ, այդ աշխատանքներն անհրաժեշտ եւ սկսել մոտավորապես հոկտեմբերի 20-ից և ավարտել $100^{\circ}/_0$ -ով ամենաուշը մինչև նոյեմբերի 10-ը: Այդեթաղը նշված ժամկետից շուտ սկսելու այն բացասական հետեւանքը կունենա, վոր մենք նոխ՝ զրանով հսարակորություն չենք տա այդ ժամանակ գեռիս կանաչ տերեվներին կատարելու սննդանյութեր կուտակելու իրենց դրական, սղոտակար գործը, և յերկրորդ՝ հատկապես վորոշ փոփոխակների վազերին ժամկետի շենք տա ավելի լավ փայտացներու իրենց մատերը (իսկ մննդանյութերով աղքատ և լավ չփայտացած մատերը բերք թիչ են տալիս, ցրտերին թիչ են դիմանում, իբրև տնկանյութ ցածրորակ են լինում և այլն): Իհարկե, միանդամայն դատապարտելի կլիներ այդիների թաղելուն ձեռնարկել նշված ժամանակից ուշ, կամ բավարարվել միայն ծերկապ անելով, հույս դնելով թե այդ տարում մի գուցե ձմեռը տաք լինի և ձյունը հաստ շերտով նստելով ծածկի, պաշտպանի խաղողի թփերը: Վորչափով վոր այդեթաղն առայժմ կատարվում է ձեռքի աշխատանքով (թեև լարային այդիների համար այգեգործական կայանն աշխատում եւ պատրաստել հատուկ այգեթաղ մեջենա), ուստի թաղելուց առաջ այգին պիտի չըել այն հաշվով, վոր աշխատանքներն սկսելիս հողը ցեխ չլինի և բահով լավ «բելաթա» վերցվի: Անհրաժեշտ եւ այ-

գեթաղը կտարել բարձր վորակով. այս աշխատանքների ժամանակ թույլ չտալ կոտրվածքներ (քիչ չեն այնպիսի դեպքեր, յերբ բաղմաթիվ վազերի մոտ ջարդվել են ըերքառու մատերը, անգամ թևերը):

Թմբային սիստեմի այգիները թաղելու ժամանակ հողը պետք է հավասարապես վերցնել զիսավորապես թմբամիշերից: Վորոշ տեղերում նկատվում ե, վոր հողը վերցնում են միայն թմբից զամ անմիջապես թմբի տակից, վորի հետեւ վանքով շատ ժամանակ բացվում և ցրտահարման վտանգի յն յենթարկվում վազի հիմնական արմաները:

Վերջապես վազերը պետք է այնպես թաղել, վոր հավասար կերպով ծածկված լինեն առնվազը 12—15 սանտի-մետր հաստության հողաշերտով, չմնան բաց տեղեր և կարիք չգուացվի նորից «կարկատան» անել՝ այդ բաց տե-ղերը ծածկելու համար։

ԻՆՉՊԵՍ ՏՆԿԵԼ ՆՈՐ ԱՅԴԻՆԵՐ

Խորհրդային այս կամ այն հանրապետության մեջ այ-
գեգործության, ինչպես և մյուս կուլտուրաների զարդա-
ցումը տարվում և սոցիալիստական, պլանային տնտեսու-
թյան ընդհանուր պահանջների համաձայն։ Այս կամ այն
վայրում այգիներ են գցում յելնելով այգեգործության
զարդացման հնդամյա պլանից, իսկ այդ պլանի համաձայն
խաղողի վաղի մշակությունը հիմնականում դարդանալու
յե մեր խորհանուեսություններում ու կոլտնտեսություն-
ներում այն վեպքում, իհարկե, յերբ արդեն վորոշված և
տվյալ շրջանում կամ զյուղում մշակվելիք կուլտուրաների
փոխարարերությունը, նրանցից ամեն մեկին հատկացվե-
լիք հողերի տարածությունը, վորակը ևայն:

Յենելով վերսիցալ սկզբունքներից ու հաշվի առնելով խաղողի վագերի առանձնատկությունները հողացին կիմայական պայմանների նկատմամբ, ըստինանրապես

խաղողի վաղին՝ հատկացնում են պինդ, բարքարոտ, կափային, ավաղային և մննդանյութերով վոչ շատ հարուստ, վոչ սեահողերը, թեև այդեղործությանը կարող են հատկացնել ըոլոր տեսակի հողերը, բացառությամբ ուժեղ աղային («շուռաբյաթ») և ճահճային հողերի (մի բան, վոր մյուս արժեքավոր շատ կուլտուրաների հետամամբ կիրառելը հնարավոր չե): Ինքնին հասկանալի յե, վոր մեղ տրված հողային մասսիվի սահմաններում պետք է կատարենք առանձին հողակտորների ընտրություն և բաշխում, յենսելով խաղողի վերամշակման ուղղությունից ու փոփոխակների յուրահատկություններից՝ որինակ, համեմատաբար հարուստ և փուխը հողերը ընտրում ենք «գառան զմակ» խաղողը տնկելու համար (յեթե ավյալ տեղի ստանդարտի մեջ մտնում ե), իսկ ավելի քարքարոտ, պինդ հողերը տրամադրում ենք «խարջուին»:

Սայցնելով այգեանկման բուն հարցերին, պետք է ասել, վոր լինի դա խորհանտեսությունում, կողմանտեսությունում, թե աշխատավոր մենահանտեսների մոտ, չպետք է նոր այգի տնկվի, զցվի առանց հողագիտական, յերկրաշափական և, վոր կարեորն է, անտեսական-կազմակերպչական նախնական աշխատանքների կատարմանը: Այս գործում հողագետներից բացի, անոպայման պետք է մասնակցեն նաև փորձված դյուզատնահետեւները, պլանավիճակները (առև ՀՄԽՀ հողժողկոմատի համապատասխան հրահանգը):

Յերբ նշված ձեռվ կատարված ու տվյալ սահմանվուի հետո ձեռնամանութիւն և կաղմված պլանը, ապա դրանից հետո ձեռնամուխ են լինում արգելն տնտեսության կազմակերպման անմիջական աշխատանքներին, վորոնց նպատակն եւ, ինչպես այդ ձևակերպված և Համ. այգեզործ. ինստիտուտի 1933 թվի «Ագրոնմանարկումների» մեջ, — ա) «արտադրական պրոցեսների առավելագույն մեքենայացումը», բ) «աշխատանքի ամենաբարձր արտադրողականություն», գ) «արտադրանքի նվազագույն ինքնարժեք», դ) «հաշվառման առավելագույն

պարզեցում»—պայմանով, մենք կասեցինք, վոր բոլոր դեպքերում ապահովի՛ քանակի հետ նաև բարձր վորակի բերք՝ տվյալ հողալին կլիմայական պայմաններում:

Նեկավարվելով հենց այս սկզբունքներով, պետք է հատկացված հողամասը բաժանել արտադրական վանդակների և այլ տերիտորյալ-արտադրական միավորների, նշելով վոռոգման ցանցն ու ձևապարհները, բնակության և ոժանդակ շենքերի տեղը և այլն: Բացի այդ, նախապես վորաշվում են նաև ազրոտեխնիկական մի շարք հարցեր (վագերին հետազայում տրվելիք ձևափորման սիստեմը, տնկելու խտությունն ու այլ ինդիքները):

Նոր սնկվող այգու տերիտորիան կազմակերպելիս ամենից առաջ ուրվագծվում են արսպես կոչված արտադրական վանդակները: Դրանք հանդիսանում են տեսն կողմից ձևապարհներով պարփակված արտադրական-տերիտորյալ միավորներ, վորոնք զբաղված են լինելու վագերի համատարած տնկվածքով (տես Վ. Ի. Վ. Շ. վերը նշված 1933 թիվի հրատարակությունը): Վանդակների լայնությունը կամ վաղաշրբի յերկարությունը ներկայումս ընդունվում է 100 մետր: Վանդակի յերկարությունը, շարքերին ուղղահայաց ուղղությամբ, սահմանվում է 500 մետր, վորից հետո գալիք և 7 մետր լայնության ձևապարհ և նորից 500 մետր յերկարություն ունեցող վանդակ:

Այն կոնկրետ դեպքերում, յերբ հողամասի դիրքն այդ հարմարությունը չի տալիս (տեղը շատ գար ու փոք ե),—ստիպված յերկարությունը պետք է պակասեցնել:

Այսպիսով, ուրեմն, մեկ վանդակի նորմալ մեծությունը, տարածությունը կազմում է հինգ հեկտար: Վանդակի յերկարությամբ ամեն մի 100 մետրի վրա պետք է տրնել սյուներ, այսպիսով պայմանական ձևով (վոչ ձևապարհներով) վանդակը հինգ առանձին հեկտարների վերածելով: Սրտադրական վանդակի յերկարությամբ, այլ կերպ

ասած, վաղաշարքերին ուղղահայց թողնված հանուպարհի յեզրերով զգվում ե առուն, վորից և ջուր և թողնվում վաղաշարքերը:

Վաղաշարքերի յերկարությունը կամ վանդակի լայնությունը 100 մետրից ավելի չպետք է լինի այն նկատառումնի, վորպեսզի ներկայումս դեռ ձեռքով կատարվող բերքը հավաքելու և շարքից դուրս բերելու, ինչպես և այլ գեղաքերում աշխատանքի մեծ կորուստ չլինի (100 մետրի ժամանակը շարքերի կիսից այս և այն կողմ մնում ե բերքը փոխազդրել միայն 50 մետրի վրա): Սակայն մյուս կողմից՝ արակտորով խոր վար կատարելու (այդեվորի փոխարեն), միջարքային մշակության և այլ աշխատանքները սահմանափակվում ե 100 մետրի վրա: Այդ գրությունից գուրս գալու համար տերիտորիան սկսաք և կազմակերպելով մեկ վանդակին նրա լայնության կողմից հաջորդի մի քանիսը (ընդունվում է 10-ը), վորոնց շարքերն ունենալով մինչույն ուղղությունը և համընկնելով իրար հետ՝ հնարավորություն տան արակտորին, առանց պառույտ գործելու, սննդի 10 վանդակի լայնությունը կամ 1000 մետր:

Այսուղեա ել միանդամայն անհրաժեշտ ենք համարում զգուշացնել, վոր ձևապարհները պետք ե այնպիս կառուցվեն, վոր արակտորին աղատ կերպով հնարավորություն ունենան անարգել աշխատելու, անցնելով մեկ վանդակից մյուսը՝ վանդակների միջև, շարքերին ուղղահայաց վնացով ձանալարնի և առվի բանած տարածությունը միասին պետք է լինի 6,5 մետր: Ամենամի տասը վանդակից հետո լինած ճանապարհի (վրատեղից վոր տրակտորը պիտի պառույտ գործի) լայնությունը պետք է լինի 8 մետր:

Խոշոր տարածություն լինելու դեպքում վանդակների խամբ, կամ, ինչպիս ասում են, արտադրական հողամարթերը, կամ, ինչպիս ասում են, արտադրական հողամարթերն իրար հետ կապակցելու համար թողնվող գլխավոր մերն իրար հետ կապակցելու համար բանելու յե 100 լայնություն: Արտադրական հողամասը բանելու յե 100 հեկտար տարածությամբ մաքուր այժիք, առանց ձևապարհների և առուների, վորոնց բռնած տարածությունը գլխա-ների և առուների, վորոնց բռնած տարածությունը գլխա-ների և առուների ու շենքերի հետ միասին պետք է վոր ձևապարհների ու շենքերի ու շենքերի հետ միասին պետք է:

կազմի հողամասի սովորաբար $8-9^{\circ}/_0$ -ից վոչ ավելին¹⁾:

Մշակելի հողամասի կազմակերպման վերոհիշյալ հիմնական հարցերը լուծելուց հետո, և յեթև պլանափոխ ժամկինածես և արվելու, նախապես շարքերի տեղն և ուղղությունը փորոշելուց հետո, կարելի յէ անցնել հոդի նախական խոր մշակությանը (պլանափոխին):

ԱՅԴՈՒ ՀՈՂԻ ԵԱԿԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ ՅԵՎ ՏԱԿՈՒՄԸ

Տակվելիք նոր այլու հոդն անհրաժեշտ և նախապատ-
րաստել՝ մեխանիկական ուժով համատարած խորը վար
կատարելով, միայն այն գեպքերում, յերբ հողային պայման-
ները թույլ չեն տալիս, կատարել ձեռքով՝ առուներ հանե-
լով (շատ քարքարոտ, խիստ խորդ ու բորդ հողերում):
Այս գեպքում դուրս յեկած շատ խոշոր քարերը պետք ե
պայմանել:

Համատարած վար անելիս վարի խորությունը պետք է վերցնել 50 սանտիմետրից վոչ աղակաս, իսկ առուների դեպքում խորությունն ու լայնությունը լինում է 50×50 սմ².

Աշնանը կատարելու դեպքում համատարած խոր վարի ամենի մեծ դրական նշանակություն կունենա, իսկ այդ չհաջողվելիս, համենայն դեպք, այդ աշխատանքները պետք են ավարտվեն անկելուց ամենաքիչը մեկ ամիս առաջ:

Վարից հետո, տնկելուց առաջ, կատարվում եւ կոշտու հողերի փոցխում և հավասարեցում, նշվում են շարքերի տեղերը և նշան արված լարերով են գծվում նաև տնկման տեղերը: Արարատյան դաշտի պայմաններում վագերը տնկվում են իրարից 1,5 մետր, իսկ շարքերը 2,5

¹⁾ Մեզ մոտ Յ-րդ խորհանակեսության ելեկտրոլարի պայմաններում, ուր ակոսի յերկարությունը ընդհ. 500 մետրից ավելի չե, արտադրական հողամասի մեծությունը նույնը թողնելով, կարելի յե գոյխել վանդակների գասավորությունը:

մետք հեռավորությամբ։ Տնկման խորությունը պետք է պեղյնել 40—45 սանտիմետր։ Հայաստանի հյուսիսային մասում անկվում և համեմատաբար ավելի խիտ, անպայմանորեն հաշվի առնելով նաև մեխանիզացիայի հնարավորությունները (շարքամիջերում թողնելով համապատասխան տարածություն) ¹⁾։

Տնկման համար իբրև հիմնական մատերյալ ժառայի-
լու յեն արմատակալած կտրոնները («յերինջներ»), վո-
րոնց արմատները մատի ներքեխ ծայրից 3—4 միջնան-
գույց վերև հեռացվում են, իսկ արմատակալած այդ ներ-
քնի 3—4 հանգույցների վրա թողնվող հիմնական արմատ-
ները, անկերուց առաջ, պետք է թարմացնել, կարճացնել՝
սակայն չպետք է այդ թողնվելիք արմատներն այնքան
շատ խուզել կամ բոլորովին կտրել, ինչպես սխալ կերպով
անում են վորոշ տեղերում։ Արմատակալած կտրոնները
տնկում են անպայման ուղիղ շարքերով, վարոնք, ըստ հնա-
բավորության, գասավորվում են այնպես, վոր բացի վառող-
ման հնարավորություն տալուց, նաև քամու տիրապետող
հոսանքին զուգահեռ լինեն։

Այդին արմատակալածներով պետք ե տնկել նախորոք հանված վոսերում կամ առուներում և նույն որը, կամ ամենաառշը հաջորդ որը ջրել (վորտեղ վոր այգիները վո-ռոգելի յեն): Տնկելուց հետո պետք ե թողնել մեկ շեմ, յեթե լավ ե՝ առաջին հերթին թողնել ներքեինը, ետելով 2 աճրի վրա:

Տակման ժամկետ սահմանվում և դարսանը առաջի
1-ից մինչև մայիսի 10-ը. Աշնանը տնկումներ կատարվում

¹⁾ Ստանդարտի մեջ մտնող իգական ծաղիկ ունեցող փոփոխակներ (ալախովի, ամբարի և այլն) տնկելիս, վերջինների պամեն մի շարքին ընդմեջ պետք է տնկել մեկ շարք յերկսեռ փոփոխակ՝ իրրե փոշոտիչ:

Ան բացառապես արմատակալածներով, անմիջապես ջրվում և ծածկվում հողով. ժամկետ՝ հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 15-ը:

ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խաղողի տնկարանին պետք է անպայման հատկացնել 40—45. սմ խորությամբ համատարած կերպով վարփած լավորակ հող. Տնկարանի շնորհիվ, մենք համեմատարար փոքր տարածության վրա կենարունացված բազմահազար մատերի նկատմամբ ապահովում ենք լավագույն մշակությունն ու խնամքը. Դրա հետևանքով խաղողի մատերը կարողանում էն մեկ տարվա ընթացքում բավականաչափ լավ դարձացնել իրենց արմատներն ու հողից դուրս գրանցված մասերը:

Այսպիսով մենք ունենում ենք լավորակ մատերյալ գարնանային և աշնանային այդետնիկութների համար. Խնքըն-ըստինքան հասկանալի յի, վոր լավ արմատակալածներ («շիշակներ») ստանալու համար բավական չեն միայն լավ հող ու մշակության լավ պայմաններ, այլ պետք է վոր տնկելու համար ընտրված լինեն տվյալ շրջանի աստրակ-մենտի մեջ մտնող փոփոխակներից լավ կտրոններ (վոչ ճիշճանդու, չհոսացած, վոչ նվազ աճած կամ անընդորի թփե-րից վերցվածներ), այլ կերպ ասած, պետք է ընտրել վո-րակավոր կտրոններ՝ բացառապես առաջուց բատ դրական հատկանիշների սելեկցիայի յենթարկված (յառվիկավորված) վազերից:

Կտրոնները վերցնել դարնանը, իսկ այստեղ, ուր այ-դիները չեն թաղում նաև աշնանը կամ ձմբանը, առանձին խրձերով (200-ական հատ) կապել և հողում թաղել մինչ տնկելուց 3—4 որ առաջ (այս ժամանակ հողից հանում, կատարում են թարմացում և անմիջապես դնում հոսոր

ջրի մեջ մինչև տնկելը): Թարմացնելուց հետո կտրոնը պետք է ունենա 55 սմ-ից վոչ պակաս յերկարություն, վորի համար, ետեղու ժամանակ, վաղերից մատեր են վերցը-նում 70 սմ. վոչ պակաս յերկարությամբ:

Տնկարանում կտրոնները պետք է տնկել 40 սմ. վոչ պակաս խորությամբ, նախապես հանված առուների մեջ պակաս խորությամբ, պայմանով, վոր շարքերն կամ ուղղակի տնկելով շշերով, պայմանով, վոր շարքերն ուղիղ լինեն: Շարքերի միջի հեռավորությունը լինելու յե-մեկ մետրից վոչ պակաս, վորպեսզի նարավոր լինի ձիա-քարշ կուլտիվատորներով քաղհան-փիլրեցում կատարել: Քարշ կուլտիվատորներով քաղհան-փիլրեցում կատարել: Քարշ կուլտիվատորներով պետք է լինի 10 սմ-ից Մատերի միջի հեռավորությունը պետք է լինի 10 սմ-ից վոչ պակաս: Այսպիսով մեկ հեկտարի վրա տնկվելու յե-մեկ մատական գցելու աշխատանքները հարյուր հազար մատական գցելու աշխատանքները պետք է սկսել ապրիլի 1-ից և ավարտել նույն ամսի 25-ին՝ ետեղով յերկու աշքից, վորի ներքեմի աչքը պետք է լինի հողի մակերեսին մոտիկ:

Առաջին ջուրը պետք է տալ հենց տնկման որը, իսկ հետագա ջրերը տրվում են նայած վազերի պահանջին 10—15 անգամ: Շիկրի հասունացումը չձգձգելու համար վերջին ջուրը տալ սեպտեմբերի 15-ից վոչ ուշ: Քաղհան-փիլրեցում կատարել 4—5 անգամից վոչ պակաս:

Բուժումը կատարել վոչ պակաս 2 անգամից: Առաջին կրորդը՝ սկսած հունիսի վերջերից:

Ամառվա ընթացքում ջոկել, տեսակավորել (և յառվի-կավորել) տվյալ հիմնական փոփոխակի հետ խառնված կավորել) տվյալ հիմնական փոփոխակի հետ խառնված այդպիսիք առանձ-վոչ ստանդարտ մատերը, հետագայում այդպիսիք դադար համար: Յեկ վերջապես, յեթե արմատա-նացնելու համար, պահպան աշնանը չեն հանվելու և տնկվելու, առա այդ կալածներն աշնանը չեն հանվելու մինչև գարուն:

Ավելորդ ենք գտնում խոսելու յերիտասարդ, վոչ բերքատու այդու խնամքի մասին, վորովհետեւ, ընդհանուր առմամբ, նույն ազրոտեխնիկական հիմնական աշխատանքներն են կատարվելու, ինչ բերքատու այգում և հետո այդ աշխատանքների մասին արդեն մասամբ խոսել ենք բերքատու այգու մշակության հարցերի կապակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿԱՌՅԱԼԻ

69

1. Նախաբան	3
2. Այգիների պարարտացումը և զուգընթաց աշխատանքներ	5
3. Այգեբաց	7
4. Վաղերի ետելը (կտրելը) և հարակից աշխատանքներ	7
5. Այգիներ փորելու աշխատանքը	11
6. Վազի կանաչ հատումներ	13
7. Քաղաքացի, վիրեցման և այլ զուգընթաց աշխատանքներ	16
8. Այգիների վառոգումը	17
9. Այգիների բուժումը	19
10. Բերքի պահպանության, բերքահավաքի մասին	22
11. Այգեթաղի մասին	24
12. Խնձորես տնկել նոր այգիներ	26
13. Այգու հողի նախապատրաստումը և տնկումը	30
14. Խաղողի տնկարանի կազմակերպումը	32



Պատ. իմրեզիք՝ Ա. Մանասյան
Վահագան՝ Արք. Գրիգորյան

Սբբագրիչ՝ Խ. Այվազյան

Դաշվիթի լիաղոր Նը 9—73

Հրատ. № 195

պատվեր № 175

տիրած 2000

Հանձնված և արտադրության 1935 թ. մարտի 14-ին

Ստորագրված և սպազրելու 1935 թ. մարտի 28-ին

Քյուզիբատի տպարան, Յերևան, Նալբանդյան 50


ՀՀ Ազգային գրադարան



NL0282692

19.58.9

ԳԻՒԾ 30 ԿՈՄ.



Агротехнические мероприятия по обработке
вноградников

Составил М. МАЛХАСЯН

Адрес Зональной станции:
Эривань, I Совхоз (бывш. Сардарский сад).